Ընդունվել է. 13.02.2020
Ստորագրվել է. 19.02.2020
ՈՒԺի մեջ է մտել. 01.03.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2020 թվականի N 171-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՆՀԱՅՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի N 865-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 249-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել՝

1) Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող այն ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները, որոնց ներմուծման դեպքում «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքին (այսուհետ՝ օրենսգիրք) համապատասխան կիրառվում են միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքեր և հարկեր՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման օրինակելի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ապրանքների չափաքանակները գերազանցող քանակով Եվրասիական տնտեսական միության անդամ հանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք տարանցման մաքսային հայտարարագրով կամ ուղևորային մաքսային հայտարարագրով կամ այլ փաստաթղթերով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված (բացառությամբ օդային փոխադրումների) Եվրասիական տնտեսական միության ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից ապրանքների՝ սույն որոշման N 1 հավելվածով սահմանված ակնհայտ առևտրային չափաքանակները գերազանցելու հանգամանքը հայտնի դառնալու օրն առձեռն կամ փոստային եղանակով սույն որոշման N 3 հավելվածով սահմանված օրինակելի ձևով ծանուցումը հանձնվում է ֆիզիկական անձին՝ մինչև ներմուծման ամսվան հաջորդող ամսվա 20-ը օրենքով սահմանված կարգով ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու նպատակով:

3. Սույն որոշման N N 1 և 2 հավելվածներով սահմանված ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակները գերազանցող քանակով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների հարկման բազան որոշվում է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքին համապատասխան:

4. Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների համար հարկերը վճարվում են ներմուծվող ապրանքների՝ սույն որոշման NN 1 և 2 հավելվածներով սահմանված չափաքանակները գերազանցող մասի համար:

5. Եվրասիական տնտեսական միության ԱՏԳ ԱԱ 2106909200, 2106909803, 2106909809 ծածկագրերին, 30-րդ խմբին, 3913 ապրանքային դիրքին, 93-րդ և 97-րդ խմբերին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանած կարգերով:

6. Սույն որոշման N 1 հավելվածով սահմանված չափաքանակները չեն տարածվում՝

1) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավոր ներմուծվող ապրանքների վրա.

2) Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող ապրանքների վրա, եթե այդ ապրանքների ընդհանուր քաշը չի գերազանցում 31 կիլոգրամը, իսկ արժեքը՝ 150 հազ. դրամը:

7. Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների հետ կապված՝ միասնական դրույքաչափերով գանձվող մաքսատուրքերը ու հարկերը, ինչպես նաև միագումար մաքսային վճարի ձևով գանձվող մաքսատուրքերը ենթակա են

վճարման օրենսգրքով սահմանված կարգով՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի որոշմամբ սահմանված չափաքանակների և դրույքաչափերի համաձայն:

8. ՈՒժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հուլիսի 30-ի «Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված կարգով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների ակնհայտ առևտրային չափաքանակներն ու ներմուծման հարկային հայտարարագիր ներկայացնելու և անուղղակի հարկերի վճարումն իրականացնելու պարտավորության վերաբերյալ ծանուցման ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 20-ի N 502-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 865-Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի մարտի 1-ից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ Ն. Փաշինյան

2020 թ. փետրվարի 19
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության
2020 թվականի փետրվարի 13-ի
N 171-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՆՀԱՅՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	**Ապրանքի համառոտ բնութագիրը**	**Սույն չափը գերազանցող մասը համարվում է ապրանքների ակնհայտ առևտրային քանակությունը**
1	2	3
01	Կենդանի կենդանիներ	3 հատ (գլուխ)
0105	Ընտանի կենդանի թռչուններ, հավեր, բադեր, սագեր, հնդկահավեր	50 հատ (գլուխ)
02	Միս և մսի սննդային ենթամթերքներ	25 կգ
03	Ձկներ և խեցգետնանմաններ, կակղամորթեր և ջրային այլ անողնաշարավորներ	25 կգ
0301-0304, 0306	Ձկներ, ծովամթերք	2.5 կգ
04	Կաթնամթերքներ, թռչնի ձու, բնական մեղր, կենդանական ծագման սննդամթերքներ՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	25 կգ
0407	Թռչնի ձու կեղևով, թարմ, պահածոյացված կամ եփած	150 հատ
05	Կենդանական ծագում ունեցող մթերքներ՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	25 կգ
06	Կենդանի ծառեր և այլ բույսեր, սոխուկներ, արմատներ և բույսերի նմանատիպ այլ մասեր,	15 հատ՝ յուրաքանչյուր տեսակից կամ 25 կգ

	կտրված ծաղիկներ և դեկորատիվ կանաչ	
07	Բանջարեղեն և որոշ ուտելի արմատապտուղներ և պալարապտուղներ	25 կգ յուրաքանչյուր տեսակից
08	Ուտելի մրգեր և ընկույզներ, ցիտրուսային մշակաբույսերի և սեխի կեղևներ և կճեպներ	25 կգ յուրաքանչյուր տեսակից
09	Սուրճ, թեյ, մատե կամ պարագվայական թեյ և համեմունքներ	10 կգ
10	Հատիկաբույսեր	10 կգ
11	Ալրաղացաձավարային արդյունաբերության արտադրանք, ածիկ, օսլա, ինուլին, հացահատիկային սոսնձանյութ	25 կգ
12	Յուղատու սերմեր և պտուղներ, այլ սերմեր, պտուղներ և հատիկներ, դեղաբույսեր, բույսեր տեխնիկական նպատակների համար, ծղոտ և անասնակեր	25 կգ
13	Դոժխեժ բնական չմաքրված, բուսախեժեր, խեժեր և այլ բուսական հյութեր և լուծամզուքներ (էքստրակտներ)	25 կգ
1302 11 000 0	Ափիոն	0
14	Հյուսածո արտադրանքի պատրաստման համար բուսական նյութեր, բուսական ծագում ունեցող այլ մթերքներ՝ այլ տեղում չհիշատակված կամ չներառված	25 կգ
15	Կենդանական կամ բուսական ծագում ունեցող ճարպեր և յուղեր և դրանց ճեղքումից ստացվող նյութեր, պատրաստի սննդայուղեր, բուսական կամ կենդանական ծագում ունեցող մոմեր	25 կգ
16	Պատրաստի մթերքներ մսից, ձկից կամ խեցգետնանմաններից, կակղամորթերից կամ ջրային այլ անողնաշարավորներից	25 կգ
1604 31 000 0, 1604 3200	Թառափազգի ձկների խավիար և դրա փոխարինիչներ	2 կգ
17	Շաքար և հրուշակեղեն շաքարից	10 կգ
1701	Շաքար	25 կգ
170410	Ծամոն, պատված կամ չպատված շաքարով	1 կգ
18	Կակաո և դրանից մթերքներ	10 կգ
19	Պատրաստի մթերքներ հացաբույսերի հատիկներից, ալյուրից, օսլայից կամ կաթից, հրուշակեղենի արտադրանք ալյուրից	10 կգ
20	Մթերք՝ բանջարեղենի, մրգերի, ընկույզների կամ բույսերի այլ մասերի վերամշակումից ստացվող	10 կգ
21	Սննդամթերք՝ տարբեր (բացառությամբ 2106909200, 2106909803, 2106909809)	10 կգ
22	Ալկոհոլային, ոչ ալկոհոլային խմիչքներ, քացախ	5լ՝ 18 տարին լրացած մեկ անձի համար
23	Սննդաարդյունաբերության մնացորդներ և թափոններ, կենդանիների համար պատրաստի	10 կգ

	կերեր (բացառությամբ ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 2 հավելվածի 1-ին կետում նշվածների)	
24	Ծխախոտ և ծխախոտի արդյունաբերական փոխարինողներ	1 կգ
2402	Սիգարներ, ծայրը կտրած սիգարներ, սիգարելլաներ (բարակ սիգարներ) և սիգարետներ՝ ծխախոտով կամ դրա փոխարինիչներով՝ սիգարներ՝ սիգարելլաներ սիգարետներ (ֆիլտրով կամ առանց ֆիլտրի)	200 սիգարետ կամ 50 սիգար (սիգարելլաներ) կամ 250 գրամ ծխախոտ, կամ նշված արտադրատեսակների ապրանքատեսականին, ոչ ավելի, քան 250 գրամ ընդհանուր քաշով՝ 18 տարին լրացած մեկ ֆիզիկական անձի հաշվարկով
25	Աղ, ծծումբ, հող և քար, ծեփագործական նյութեր, կիր և ցեմենտ	25 կգ
250100	Կերակրի աղ	5կգ
2515	Մարմար, տրավերտին կամ կրաքարային տուֆ, էկաուսին և այլ կրաքարեր հուշարձանների կամ շինարարության համար 2,5 գ/սմ3 կամ ավելի տեսակարար կշռով, և ալեբաստր, խոշոր կոտորակված կամ չկոտորակված, սղոցված կամ չսղոցված, կամ այլ եղանակով բլոկների կամ ուղղանկյուն (ներառյալ՝ քառակուսի) սալերի մասնատված	1000 կգ
2516	Գրանիտ, ծիրանաքար, բազալտ, ավազաքար և այլ քարեր՝ հուշարձանների կամ շինարարության համար, խոշոր կոտորակված կամ չկոտորակված, սղոցված կամ չսղոցված կամ այլ կերպ բլոկների կամ ուղղանկյուն (ներառյալ քառակուսի) սալերի մասնատված	1000 կգ
26	Հանքաքար, մոխիր, խարամ	1000 կգ
27	Հանքային վառելիք, նավթ և նավթավերամշակման արտադրանք, բիտումացված նյութեր, հանքային մոմեր	25 կգ
2710 12 41, 2710 19 42	Բենզին և դիզելային վառելիք	10 լիտր
2711 11 000 0 2711 21 000 0	Գազ բնական հեղուկացված և գազանման վիճակում	100 մ3
2710 19 710 0 2710 19 750 0 2710 19 820 0 2710 19 840 0 2710 19 860 0	Քսայուղեր, այլ յուղեր	10 կգ

2710 19 880 0 2710 19 920 0 2710 19 940 0 2710 19 980 0		
28	Անօրգանական քիմիայի արտադրանք, թանկարժեք մետաղների, հազվագյուտ մետաղների, ռադիոակտիվ տարրերի (էլեմենտների) և իզոտոպների օրգանական և անօրգանական միացություններ	0
29	Օրգանական քիմիական միացություններ	0
31	Պարարտանյութեր	25 կգ
32	Դաբաղման և ներկման լուծամզուքներ (էքստրակտներ), տանիններ և դրանց ածանցյալներ, ներկանյութեր, պիգմենտներ և այլ ներկող նյութեր, ներկեր ու լաքեր, մածիկներ և այլ մաստիկա, թանաք, տպագրական ներկ, տուշ	10 կգ
33	Եթերայուղեր և ռետինոիդներ, օծանելիքային, կոսմետիկական և հարդարման միջոցներ	1 կգ
3303 00	Օծանելիք և հարդարաջուր	5 հատ՝ յուրաքանչյուրից
3304	Կոսմետիկական, դիմահարդարման և մաշկի խնամքի համար միջոցներ (բացի դեղամիջոցներից), ներառյալ միջոցներ՝ արևաթխության համար կամ արևաթխության դեմ, մանիկյուրի և պեդիկյուրի միջոցներ	6 հատ՝ յուրաքանչյուր ապրանքային ենթադիրքից
3305	Միջոցներ մազերի համար	6 հատ՝ յուրաքանչյուր ապրանքային ենթադիրքից
3306	Բերանի խոռոչի և ատամների հիգիենայի միջոցներ, ներառյալ ատամնապրոթեզների ֆիքսացման փոշիներն ու մածուկները, միջատամային տարածքները մաքրելու թելեր, անհատական փաթեթավորմամբ, մանրածախ վաճառքի համար	6 հատ՝ յուրաքանչյուր ապրանքային ենթադիրքից, բայց 8 հատից ոչ ավելի
3307	Միջոցներ՝ սափրվելուց առաջ կամ հետո օգտագործելու համար, անհատական օգտագործման հոտազերծիչներ, լոգանքի բաղադրություններ, մազահեռացման միջոցներ և այլ պարֆյումերային, կոսմետիկական և հարդարման միջոցներ՝ այլ տեղերում օգտագործելու համար, բուրումնավետ, հականեխիչ հատկություններով կամ առանց դրանց	6 հատ՝ յուրաքանչյուր ապրանքային ենթադիրքից, բայց 8 հատից ոչ ավելի
34	Օճառ, մակերևութային ակտիվ օրգանական նյութեր, լվացող միջոցներ, օծող նյութեր, արհեստական և պատրաստի մոմանյութեր, մաքրման կամ փայլեցման համար բաղադրություններ, մոմեր և նմանատիպ արտադրանք, ծեփման համար մածուկներ,	10 կգ՝ յուրաքանչյուր ապրանքային ենթադիրքից

	պլաստիլին, «ատամնաբուժական մոմ» և գիպսի հիմքով ատամնաբուժական բաղադրություններ	
35	Սպիտակուցային նյութեր, վերափոխված (մոդիֆիկացված) օսլաներ, սոսինձներ, խմորիչներ (ֆերմենտներ)	5 կգ
36	Պայթուցիկ նյութեր, պիրոտեխնիկական արտադրանք, լուցկի, հրակիր համահալվածքներ, որոշ այրվող նյութեր	0
3605 00 000 0	Լուցկի՝ բացառությամբ 3604 ապրանքային դիրքի պիրոտեխնիկական արտադրանքի	100 տուփ
37	Լուսանկարչական և կինո-ապրանքներ	10կգ
38	Քիմիական այլ արտադրանք	5կգ
39	Պլաստմասսա և պլաստմասսայե արտադրանք, բացառությամբ 3913 և 3922 ապրանքային խմբերի	25 կգ
3922	Պլաստմասսայե լոգնոցներ, ցնցուղներ, կոնքեր ջրի հոսքի համար, կոնքեր լվացվելու համար, բիդեներ, զուգարանակոնքեր, դրանց համար նստոցներ ու կափարիչներ, ջրաթափ բաքեր և համանման սանիտարատեխնիկական ապրանքներ	1 հատ՝ յուրաքանչյուրից
40	Կաուչուկ, ռետին և դրանցից իրեր	10կգ
4011, 4012, 4013	Օդաճնշական ռետինե անվադողեր, դողածածկաններ և ռետինե օդախցիկներ	5 հատ՝ յուրաքանչյուր դիրքից
41	Անմշակ կաշվե հումք (բացի բնական մորթուց) և կաշի	5 հատ, բայց ոչ ավելի քան 20մ2
42	Իրեր կաշվից, թամբի սարքեր և լծասարքեր, ճամփորդական պարագաներ, կանացի պայուսակներ և դրանց համանման ապրանքներ, կենդանիների աղիներից իրեր (բացի շերամաորդի մանրաթելից)	4 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 20 հատից ոչ ավելի
43	Բնական և արհեստական մորթի, դրանից իրեր	Յուրաքանչյուր ենթադիրքից 1 հատ, բայց 4 հատից ոչ ավելի
44	Փայտանյութ և դրանից արտադրատեսակներ, փայտածուխ	25 կգ
4402	Փայտածուխ (ներառյալ ածուխը՝ կճեպից կամ ընկույզներից ստացված)՝ շեղջաքարացված (ագլոմերացված) կամ չշեղջաքարացված (չագլոմերացված)	25 կգ
4403, 4406, 4407, 4408	Անտառանյութեր՝ չմշակված, կեղևը կամ մատաղ շերտը հեռացրած կամ չհեռացրած կամ կոպիտ եզրատաշած կամ չեզրատաշած, փայտակոճեր երկաթուղային կամ տրամվայի գծերի համար, անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղևահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ավելի հաստությամբ, երեսապատման թերթեր (ներառյալ շերտավոր	2մ3

	փայտանյութի մասնատումից ստացված թերթերը)՝ սոսնձած նրբատախտակի կամ նույնանման շերտավոր փայտանյութի համար, և այլ անտառանյութեր՝ երկայնակի սղոցմամբ կամ ճեղքմամբ, ռանդմամբ կամ կեղևահանմամբ ստացված, ռանդմամբ, հղկմամբ մշակված կամ չմշակված, ճակատային միացումներով կամ առանց դրանց, 6 մմ-ից ոչ ավելի հաստությամբ	
45	Խցան և դրանից իրեր	25 կգ
46	Ծղոտից և հյուսելու համար այլ նյութերից իրեր, զամբյուղային և հյուսածո իրեր	25 կգ
47	Խյուս՝ փայտանյութից կամ այլ թելքավոր ցելյուլոզային նյութերից, վերականգնված թուղթ կամ ստվարաթուղթ (թղթի թափոններ)	25 կգ
48	Թուղթ և ստվարաթուղթ, իրեր թղթե զանգվածից, թղթից կամ ստվարաթղթից	10 կգ
49	Տպագրված գրքեր, թերթեր, պոլիգրաֆիական արդյունաբերության վերարտադրություններ և այլ արտադրանք, ձեռագրեր, մեքենագիր տեքստեր և պլաններ	25 կգ
50	Մետաքս	10 կգ
51	Բուրդ, կենդանիների նուրբ կամ կոշտ մազ, ձիու մազից մանվածք և գործվածք	10 կգ
52	Բամբակ	10 կգ
53	Այլ բուսական տեքստիլ թելեր, թղթե թելեր և գործվածք թղթե թելերից	10 կգ
54	Քիմիական թելեր	10 կգ
55	Քիմիական մանրաթելեր	10 կգ
56	Բամբակ, թաղիք կամ նրբաթաղիք և չգործված կտորեղեն, հատուկ մանվածք, լարաններ, ճոպաններ, պարաններ	10 կգ
57	Գորգեր և հատակի այլ մանածագործական ծածկոցներ	24 մ2
58	Հատուկ գործվածքներ, թափակար նրբախավով գործվածքներ, ժանյակներ, գոբելեններ, զարդարման նյութեր, ասեղնագործվածքներ	10 կգ
5804 10	Ճղարշ և այլ ցանցահյուս պաստառներ	5 կգ
59	Մանածագործական նյութեր, ներծծված ծածկույթով կամ երկտակված, տեխնիկական նշանակության մանածագործական արտադրանք	10 կգ
60	Տրիկոտաժե պաստառներ մեքենայագործ կամ ձեռագործ	10 կգ
61	Տրիկոտաժե հագուստի իրեր և պարագաներ մեքենայագործ կամ ձեռագործ	25 կգ
62	Հագուստի իրեր և պարագաներ, բացի մեքենայագործ կամ ձեռագործ տրիկոտաժեղենից	25 կգ
63	Այլ պատրաստի մանածագործական արտադրանք, լրակազմեր, հագուստ և մանածագործական արտադրանք՝ նախկինում օգտագործված, լաթեղեն	25 կգ

64	Կոշկեղեն, զանկապաններ և նմանատիպ իրեր, դրանց մասեր	5 զույգ
6406	Կոշիկի մասեր	10 կգ
65	Գլխարկներ և դրանց մասեր	10 հատ
66	Անձրևային հովանոցներ, արևապաշտպան հովանոցներ, ձեռնափայտեր, ձեռնափայտ աթոռներ, ճիպոտներ, ձիավարության մտրակներ և դրանց մասեր	4 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 20 հատից ոչ ավելի
67	Մշակված փետուրներ և բմբուլ, իրեր՝ փետուրներից կամ բմբուլից, արհեստական ծաղիկներ, մարդու մազերից պատրաստված իրեր	10 կգ
68	Արտադրանք քարից, գիպսից, ցեմենտից, ասբեստից, փայլարից կամ նմանատիպ նյութերից	1000 կգ
69	Խեցեգործական արտադրատեսակներ	1000 կգ
70	Ապակի և ապակուց պատրաստված արտադրատեսակներ	25 կգ
7101	Մարգարիտ բնական կամ կուլտիվացված, մշակված կամ չմշակված, սորտավորված կամ չսորտավորված	0,5 կգ, բայց ոչ ավելի, քան 25 հազ. դոլարին համարժեք դրամ
7102	Ադամանդ մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված	0
7103	Թանկարժեք (բացի ադամանդից) և կիսաթանկարժեք քարեր, մշակված կամ չմշակված, բայց չշրջանակված կամ չամրացված	մինչև 1 կարատ, կամ 1 կարատից բարձր 1 հատ, բայց ոչ ավելի, քան 25 հազ. դոլարին համարժեք դրամ
7104	Թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարեր, արհեստական, մշակված կամ չմշակված, սորտավորված կամ չսորտավորված	մինչև 1 կարատ, կամ 1 կարատից բարձր 2 հատ, բայց ոչ ավելի, քան 25 հազ. դոլարին համարժեք դրամ
7105	Փշրանք և փոշի՝ բնական կամ արհեստական թանկարժեք կամ կիսաթանկարժեք քարերից	մինչև 1 կարատ կամ 0.5 կգ բայց ոչ ավելի, քան 25 հազ. դոլարին համարժեք դրամ
7106	Արծաթ (ներառյալ ոսկուց կամ պլատինից գալվանական ծածկույթով)՝ չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով	10 կգ
7107 00 000 0	Մետաղներ՝ ոչ թանկարժեք, արծաթով երեսապատված, կիսամշակված, առանց հետագա մշակման	10 կգ
7108	Ոսկի (ներառյալ ոսկի՝ պլատինից գալվանական ծածկույթով)՝ չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով	10 կգ
7109 00 000 0	Մետաղներ՝ ոչ թանկարժեք կամ արծաթ՝ երեսապատված ոսկով, չմշակված կամ կիսամշակված	10 կգ
7110	Պլատին՝ չմշակված կամ կիսամշակված կամ փոշու տեսքով	10 կգ
7111 00 000	Մետաղներ՝ ոչ թանկարժեք, արծաթ կամ ոսկի՝	10 կգ

0	երեսապատված պլատինով, չմշակված կամ կիսամշակված	
7112	Թանկարժեք մետաղների կամ թանկարժեք մետաղներով երեսապատված մետաղների թափոններ և ջարդոն. թանկարժեք մետաղ կամ թանկարժեք մետաղների միացություններ պարունակող այլ թափոններ և ջարդոն, որոնք, հատկապես, կիրառվում են թանկարժեք մետաղներ ստանալու համար	10 կգ
7113 7114 7115 7116	Ոսկյա և արծաթյա իրեր	3 հատ՝ յուրաքանչյուր դիրքից, բայց ոչ ավելի, քան 25 հազ. դոլարին համարժեք դրամ
7117	Ոչ թանկարժեք զարդեղեն (բիժուտերիա)	5 հատ
7118	Մետաղադրամներ	5 հատ
72	Սև մետաղներ	25 կգ
73	Արտադրատեսակներ սև մետաղից	25 կգ
74	Պղինձ և արտադրատեսակներ պղնձից	25 կգ
75	Նիկել և արտադրատեսակներ նիկելից	25 կգ
76	Ալյումին և արտադրատեսակներ ալյումինից	25 կգ
78	Կապար և ապրանքներ կապարից	25 կգ
79	Ցինկ և ապրանքներ ցինկից	25 կգ
80	Անագ և ապրանքներ անագից	25 կգ
81	Այլ ոչ թանկարժեք մետաղներ, մետաղակերամիկա, ապրանքներ դրանցից	0
82	Ոչ թանկարժեք մետաղներից պատրաստված գործիքներ, դանակներ, գդալներ և պատառաքաղներ, դրանց մասեր	25 կգ
83	Ոչ թանկարժեք մետաղներից այլ արտադրատեսակներ	25 կգ
84	Միջուկային ռեակտորներ, կաթսաներ, սարքավորումներ և մեխանիկական հարմարանքներ, դրանց մասեր	0
8402	Շոգեկաթսաներ կամ այլ շոգեարտադրող կաթսաներ (բացի կենտրոնական ջեռուցման ջրակաթսաներից, որոնք կարող են արտադրել ցածր ճնշման գոլորշի), ջրային կաթսաներ՝ գերտաքացուցիչներով	1 հատ
8403	Կենտրոնական ջեռուցման կաթսաներ՝ բացի 8402 ապրանքային դիրքում նշված կաթսաներից	1 հատ
8404	Օժանդակ սարքավորումներ, որոնք օգտագործվում են 8402 կամ 8403 ապրանքային դիրքերում նշված կաթսաների հետ (օրինակ՝ ջերմօգտագործիչներ, շոգեգերտաքացուցիչներ, մրի հեռացուցիչներ, գազային վերաօգտագործիչներ), կոնդենսատորներ՝ շոգեջրային կամ այլ շոգեուժային կայանքների համար	15 կգ
8405	Գազագեներատորներ կամ շոգեգեներատորներ՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց.	1 հատ

	ացետիլենային գազագեներատորներ և նույնանման գազագեներատորներ՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց	
8405 90 000 0	Մասեր գազագեներատորների կամ շոգեգեներատորների՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց. ացետիլենային գազագեներատորների և նույնանման գազագեներատորների՝ մաքրիչ կայանքներով կամ առանց դրանց	25 կգ
8406	Ջրային շոգետուրբիններ և այլ շոգետուրբիններ	1 հատ
8406 90	Մասեր ջրային շոգետուրբինների և այլ շոգետուրբինների	25 կգ
8407	Կայծային բռնկմամբ ներքին այրման շարժիչներ՝ մխոցի պտտվող կամ հետադարձ-առաջընթաց շարժմամբ	1 հատ
8408	Սեղմումով բոցավառվող ներքին այրման մխոցային շարժիչներ (դիզելներ և կիսադիզելներ)	1 հատ
8409	Մասեր՝ բացառապես կամ հիմնականում 8407 կամ 8408 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչների համար նախատեսված	15 կգ
8410	Հիդրավլիկ տուրբիններ, ջրային անիվներ և կարգավորիչներ դրանց համար	1 հատ
8410 90 000	Մասեր՝ ներառյալ կարգավորիչներ, հիդրավլիկ տուրբինների, ջրային անիվների և կարգավորիչների	25 կգ
8411	Շարժիչներ՝ տուրբոռեակտիվ և տուրբոպտուտակային, այլ գազային տուրբիններ	0
8412	Այլ շարժիչներ և ուժային կայանքներ	0
8413	Պոմպեր հեղուկային, ծախսաչափերով կամ առանց դրանց. հեղուկների վերհաններ	2 հատ
8413 91 000 8413 92 000 0	Մասեր պոմպերի հեղուկային, ծախսաչափերով կամ առանց դրանց. հեղուկների վերհաններ	25 կգ
8414	Պոմպեր օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ և օդափոխիչներ, օդափոխիչ կամ վերաշրջանառու օդաքաշ թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, ֆիլտրերով կամ առանց ֆիլտրերի	2 հատ
841490	Մասեր պոմպերի օդային կամ վակուումային, օդային կամ գազային կոմպրեսորներ և օդափոխիչներ, օդափոխիչ կամ վերաշրջանառու օդաքաշ թասակներ կամ պահարաններ՝ օդափոխիչներով, ֆիլտրերով կամ առանց ֆիլտրերի	25 կգ
8415	Օդորակման համար նախատեսված կայանքներ՝ շարժիչային օդափոխիչով և օդի ջերմաստիճանն ու խոնավությունը փոխելու համար սարքերով սարքավորված՝ ներառյալ օդորակիչները, որոնցում խոնավությունն առանձին չի կարգավորվում	2 հատ
841590	Մասեր օդորակման համար նախատեսված	25 կգ

	կայանքների՝ շարժիչային օդափոխիչով և օդի ջերմաստիճանն ու խոնավությունը փոխելու համար սարքերով սարքավորված՝ ներառյալ օդորակիչները, որոնցում խոնավությունն առանձին չի կարգավորվում	
8416	Բոցամուղներ հեղուկ վառելիքի համար, փոշիացված պինդ վառելիքի համար կամ գազային հրածորաններ. մեխանիկական հնոցներ՝ ներառյալ դրանց մեխանիկական կրակակալ ճաղացանցերը, մեխանիկական մոխրահեռացուցիչները և նույնանման սարքվածքներ	1 հատ
8418	Էլեկտրական կամ այլ տիպերի սառնարաններ, սառցարաններ և այլ սառնարանային կամ սառցարանային սարքավորումներ. ջերմային պոմպեր՝ 8415 ապրանքային դիրքում ընդգրկված օդորակման կայանքներից բացի	2 հատ
8419	Արդյունաբերական կամ լաբորատոր մեքենաներ, սարքավորումներ՝ էլեկտրական կամ ոչ էլեկտրական տաքացմամբ (բացառելով 8514 ապրանքային դիրքում ընդգրկված վառարանները, ջեռուցիչ խցերը և այլ սարքավորումներ)՝ ջերմաստիճանների փոփոխման հետևյալ գործընթացներում նյութերի մշակման համար՝ տաքացում, եփում, տապակում, թորում, բազմաթորում, մանրէազերծում, պաստերիզացում, շոգեհարում, չորացում, շոգեախտահանում, կոնդենսացում կամ սառեցում՝ բացառությամբ կենցաղային նպատակներով օգտագործվող մեքենաների ու սարքավորումների, հոսանուտ և կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ՝ ոչ էլեկտրական	1 հատ
8419 90	Մասեր արդյունաբերական կամ լաբորատոր մեքենաների, սարքավորումների՝ էլեկտրական կամ ոչ էլեկտրական տաքացմամբ (բացառելով 8514 ապրանքային դիրքում ընդգրկված վառարանները, ջեռուցիչ խցերը և այլ սարքավորումներ)՝ ջերմաստիճանների փոփոխման հետևյալ գործընթացներում նյութերի մշակման համար՝ տաքացում, եփում, տապակում, թորում, բազմաթորում, մանրէազերծում, պաստերիզացում, շոգեհարում, չորացում, շոգեախտահանում, կոնդենսացում կամ սառեցում՝ բացառությամբ կենցաղային նպատակներով օգտագործվող մեքենաների ու սարքավորումների, հոսանուտ և կուտակային (ունակային) ջրատաքացուցիչներ՝ ոչ էլեկտրական	25 կգ
8422	Սպասք լվացող մեքենաներ, սարքավորումներ՝ շշեր կամ այլ տարողություններ լվանալու կամ չորացնելու համար, սարքավորումներ՝ շշեր, բանկաներ լցնելու, խցանելու համար, արկղեր, պարկեր և այլ տարողություններ փակելու, դրանք կնքելու և պիտակավորելու համար, սարքավորումներ՝ շշերի, բանկաների, պարկուճների (տյուբիկների) և նույնանման տարողությունների՝ կափույրներով կամ	0 հատ

	կափարիչներով հերմետիկ խցանափակման համար, այլ սարքավորումներ՝ փաթեթավորման կամ փաթաթման համար (փաթեթավորման նյութերի ջերմանստեցմամբ ապրանքի փաթաթման սարքավորումները), սարքավորումներ՝ ըմպելիքներ գազավորելու համար	
8422110000	Կենցաղային սպասք լվացող մեքենաներ	2 հատ
8423	Սարքավորումներ՝ կշռելու համար (բացի 0,05 գ կամ ավելի զգայնություն ունեցող կշեռքներից)՝ ներառյալ ապրանքի զանգվածը հաշվարկող և վերահսկող մեքենաները, որոնք գործարկվում են կշռվող ապրանքի ծանրության ուժով, մանրակշռաքարեր՝ բոլոր տիպերի կշեռքների համար	0
8423101000	Կենցաղային կշեռքներ	2 հատ
8424	Մեխանիկական սարքեր (ձեռքի կառավարումով կամ առանց դրա)՝ հեղուկների և փոշիների ցրման համար, հեղացիրներ և նմանատիպ սարքեր	2 հատ՝ յուրաքանչյուրից
8425	Վերհան բազմաճախարակներ և վերհաններ՝ բացի սկիպային վերհաններից, կարապիկներ և կաբեստաններ, ամբարձիչներ (դոմկրատներ)	1 հատ
8426 12 000	Շարժական վերհան ֆերմաներ՝ անվավոր շարժամասով և սայլակավոր բեռնիչներ	1 հատ
8427	Ավտոբեռնիչներ եղանավոր բռնիչով, այլ բեռնիչներ՝ համալրված վերհան կամ բեռնիչ-բեռնաթափիչ սարքավորումներով	1 հատ
8429	Բուլդոզերներ (մղաններ)՝ ոչ դարձկեն և դարձկեն հարթաշերեփով, ուղեհարթիչներ, հարթիչներ, կեռաշերեփներ (սկրեպերներ), մեխանիկական բահեր, էքսկավատորներ, միաշերեփ բեռնիչներ, տոփանիչ մեքենաներ և ճանապարհային գլանիվներ, ինքնագնաց	1 հատ
8430 20 000 0	Գութանային և ռոտորային ձյունամաքրիչներ	1 հատ
8431 10	Մասեր՝ նախատեսված 8425 ապրանքային դիրքի մեքենաների կամ մեխանիզմների համար	25 կգ
8432	Գյուղատնտեսական մեքենաներ՝ այգիներում կամ անտառներում հողի նախապատրաստման և մշակման համար, թավալուկներ՝ սիզամարգերի կամ սպորտհրապարակների համար	1 հատ՝ յուրաքանչյուրից
8433	Մեքենաներ կամ մեխանիզմներ գյուղատնտեսական կուլտուրաները հավաքելու կամ կալսելու համար՝ ներառյալ մամլիչ-հասկահավաքները, ծղոտը կամ խոտը հակավորող մամլիչները. խոտհնձիչները կամ սիզամարգերի հնձիչները. ձվեր, պտուղներ կամ գյուղատնտեսական այլ մթերքներ մաքրելու, տեսակավորելու կամ տրամաչափարկելու համար մեքենաներ՝ բացի 8437 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից	1 հատ
8434	Կթելու համար սարքվածքներ և ապարատներ,	1 հատ

	կաթը մշակելու և վերամշակելու համար սարքավորումներ	
8435	Մամլիչներ, ջարդիչներ և նույնանման սարքավորումներ՝ գինեգործության, սիդրի, մրգահյութերի կամ նույնանման ըմպելիքների արտադրության համար	1 հատ
8436	Սարքավորումներ՝ գյուղատնտեսության, այգեգործության, անտառտնտեսության, թռչնաբուծության կամ մեղվաբուծության համար՝ ներառյալ սերմեր աճեցնելու համար սարքավորումները՝ մեխանիկական կամ տաքացնող սարքվածքներով, այլ. ինկուբատորներ՝ թռչնաբուծության համար և բրուդերներ	1 հատ
8437	Մեքենաներ՝ սերմեր, հացահատիկներ կամ չոր լոբազգի կուլտուրաներ մաքրելու, տեսակավորելու կամ տրամաչափարկելու համար. սարքավորումներ՝ ալրաղացի արդյունաբերության համար կամ հացահատիկների կամ չոր լոբազգի կուլտուրաների մշակման համար՝ բացի գյուղատնտեսական ֆերմաներում օգտագործվող սարքավորումներից	1 հատ
8443	8442 ապրանքային դիրքում ընդգրկված թիթեղների, գլանների և այլ տպագրական ձևերի միջոցով տպագրության համար օգտագործվող տպագրական մեքենաներ, միացված կամ չմիացված այլ տպիչներ, պատճենահան ապարատներ և ֆաքսիմիլային ապարատներ, դրանց մասեր ու պարագաներ	1 հատ
8450	Լվացքի մեքենաներ՝ կենցաղային կամ լվացքատների համար՝ ներառյալ քամիչ սարքվածքով համալրված մեքենաները	1 հատ
8451	Սարքավորումներ (8450 ապրանքային դիրքում ընդգրկված մեքենաներից բացի)՝ մանվածքը, գործվածքները կամ պատրաստի մանածագործական արտադրատեսակները լվանալու, մաքրելու, քամելու, չորացնելու, արդուկելու, մամլելու (ներառյալ նյութերի ջերմասևեռակման համար մամլիչները), սպիտակեցնելու, ներկելու, ապրետավորելու, վերջնամշակելու, ծածկապատելու և տոգորելու համար, և մեքենաներ՝ մանածագործական կամ այլ հիմքի վրա մածուկ քսելու համար, որոնք օգտագործվում են լինոլեումի նման հատակի ծածկույթների արտադրության մեջ. մեքենաներ՝ մանածագործվածքները կծկելու, հետ կծկելու, ծալելու, կտրելու կամ ծակելու համար	1 հատ
845210	Կարի մեքենաներ՝ կենցաղային	1 հատ
8465	Հաստոցներ փայտի, խցանի, ոսկորի, էբոնիտի, պինդ պլաստմասսաների կամ նույնանման պինդ նյութերի մշակման համար (ներառյալ մեխերով, ամրակներով, սոսնձով կամ այլ միջոցներով հավաքման համար մեքենաները)	1 հատ
8466	Մասեր և պարագաներ՝ նախատեսված	25 կգ

	բացառապես կամ հիմնականում 8456-8465 ապրանքային դիրքերում դասակարգված սարքավորումների համար՝ ներառյալ գործիքը կամ դետալներն ամրակելու հարմարանքները, ինքնաբացվող պարուրահատ գլխիկները, բաժանարար գլխիկները և այլ հատուկ հարմարանքներ հաստոցների համար. հարմարանքներ ամեն տիպի ձեռքի գործիքների համար նախատեսված աշխատանքային գործիքները ամրակելու համար	
8467	Գործիքներ՝ ձեռքի պնևմատիկ, հիդրավլիկ կամ ներկառուցված էլեկտրական կամ ոչ էլեկտրական շարժիչով	1 հատ՝ յուրաքանչյուրից
8468	Սարքավորումներ և ապարատներ՝ ցածր ջերմաստիճանով զոդելու, բարձր ջերմաստիճանով զոդելու կամ եռակցելու համար, կտրելու համար պիտանի կամ ոչ պիտանի, բացի 8515 ապրանքային դիրքին պատկանող մեքենաներից և ապարատներից. մակերեսային ջերմամշակման համար մեքենաներ և ապարատներ՝ գազով աշխատող	1 հատ
8470	Հաշվարկիչներ և գրանցման, վերարտադրության ու տվյալների տեսողական ներկայացման գրպանի մեքենաներ՝ հաշվարկիչի ֆունկցիաներով, հաշվապահական մեքենաներ, փոստային դրոշմանիշի մեքենաներ, տոմսային ապարատներ և այլ համանման մեքենաներ՝ հաշվիչ սարքերով, դրամարկղային ապարատներ	1 հատ՝ յուրաքանչյուրից
8471	Հաշվիչ մեքենաներ և դրանց բլոկներ, մագնիսական կամ օպտիկական հաշվիչ հարմարանքներ, տվյալները տեղեկատվության կրիչների վրա ծածկագրված տեսքով փոխանցող մեքենաներ և մեքենաներ՝ այդպիսի տեղեկատվությունը մշակելու համար՝ այլ տեղում չնշված կամ չհիշատակված	1 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից
8472	Այլ գրասենյակային սարքավորումներ (օրինակ՝ հեկտոգրաֆիական կամ բազմացնող տրաֆարետային ապարատներ, հասցեների մեքենաներ, ավտոմատ սարքվածքներ՝ թղթադրամներ տրամադրելու համար, մեքենաներ՝ մետաղադրամները տեսակավորելու, հաշվելու կամ փաթեթավորելու համար, մատիտներ սրելու մեքենաներ, սորատային մեքենաներ կամ մեքենաներ՝ երկաթակապերով ամրակելու համար)՝	0
8472 10 000 0	Պատճենահանող-բազմացնող մեքենաներ	1 հատ
8473	Մասեր և պարագաներ (բացի տուփերից, ծածկոցներից և համանման ապրանքներից՝ տեղափոխման համար)՝ նախատեսված բացառապես կամ հիմնականում 8469-8472 ապրանքային դիրքերում դասակարգված մեքենաների համար	5 կգ
8481	Ծորակներ, կափույրներ, փականներ և համանման	10 կգ

	ամրաններ՝ խողովակատարների, կաթսաների, ջրամբարների, գլանատակառների, բաքերի և համանման տարողությունների համար, ներառյալ՝ ռեդուկցիոն և ջերմակարգավորիչ կափույրները	
8482	Գնդիկավոր կամ հոլովակավոր առանցքակալներ	10 կգ
8483	Փոխհաղորդիչ լիսեռներ (ներառյալ բռնցքավոր և ծնկավոր) և շուռտվիկներ, առանցքակալների տուփեր և սահքի առանցքակալներ՝ լիսեռների համար՝ ժանանիվներ և ատամնավոր փոխանցիչներ, գնդիկավոր կամ հոլովակավոր պտուտակային փոխանցիչներ՝ փոխանցատուփեր և արագության այլ վարիատորներ՝ ներառյալ հիդրոտրանսֆորմատորները, թափանիվներ և փոկանիվներ՝ ներառյալ փոկանիվների բլոկները, կցորդիչներ և սարքեր լիսեռների միացման համար (ներառյալ ունիվերսալ հոդակապերը)	25 կգ
8484	Միջադիրներ և նույնանման կապող տարրեր, թերթավոր մետաղից այլ նյութի համադրությամբ կամ մետաղի երկու կամ ավելի շերտերից բաղկացած, միջադիրների և նույնանման կապող տարրերի հավաքածուներ ու լրակազմեր՝ տարբեր բաղկացուցիչներով, փաթեթավորված կապոցներով, ծրարներով կամ նույնանման փաթեթավորմամբ, մեխանիկական խցվածքներ	10 կգ
85	Էլեկտրական մեքենաներ և սարքավորումներ, դրանց մասեր, ձայնագրող և ձայնավերարտադրող սարքեր, սարքեր՝ հեռուստատեսային պատկերի և ձայնի գրանցման և վերարտադրության համար, դրանց մասեր և պարագաներ	1 հատ՝ յուրաքանչյուր դիրքից, բայց 2 հատից ոչ ավելի
8514	Արդյունաբերական կամ լաբորատոր էլեկտրական վառարաններ և խուցեր (ներառյալ՝ ինդուկցիոն կամ դիէլեկտրիկ կորուստների երևույթների հիմքով աշխատող վառարանները), այլ արդյունաբերական կամ լաբորատոր սարքավորումներ նյութերի՝ ինդուկցիոն կամ դիէլեկտրիկ կորուստների երևույթների միջոցով ջերմամշակման համար	0
8530	Էլեկտրաազդանշանային սարքվածքներ՝ երկաթուղային գծերում, տրամվայի ուղիներում, ավտոմոբիլային ճանապարհներում, ներքին ջրային ուղիներում, կայանային հրապարակներում, նավահանգիստներում կամ օդանավակայաններում անվտանգությունն ապահովելու կամ երթևեկությունը կարգավորելու համար (բացի 8608 ապրանքային դիրքում ընդգրկված սարքավորումներից)	0
8534 00	Տպասխեմաներ	0
8535	Էլեկտրական ապարատուրա կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պահպանման համար կամ էլեկտրական շղթաներին միացնելու համար (օրինակ՝ անջատիչներ, փոխարկիչներ, ընդհատիչներ, հալուն ապահովիչներ, շանթարգելներ, լարման սահմանափակիչներ, լարման ցատկերի մարիչներ, հոսանքընդունիչներ,	0

	հոսանքահաններ և այլ միակցիչներ, միակցման տուփեր) 1000 Վ-ից ավելի լարման համար	
8545	Ածխային էլեկտրոդներ, ածխային խոզանակներ, ածուխներ՝ լամպերի կամ մարտկոցների համար և այլ արտադրատեսակներ գրաֆիտից կամ ածխածնի այլ տեսակներից՝ մետաղի հետ կամ առանց մետաղի, այլ, որոնք կիրառվում են էլեկտրատեխնիկայում	0
8548	Թափոններ և ջարդոն՝ առաջնային տարրերի, առաջնային մարտկոցների և էլեկտրական կուտակիչների (ակումուլյատորների), սպառված առաջնային տարրեր, սպառված առաջնային մարտկոցներ և սպառված էլեկտրական կուտակիչներ, սարքավորումների կամ ապարատուրայի էլեկտրական մասեր՝ տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված	0
8507	Էլեկտրական կուտակիչներ, ներառյալ դրանց համար նախատեսված զտիչները, ուղղանկյուն (այդ թվում՝ քառակուսի) կամ այլ ձևի	2 հատ
8509	Կենցաղային էլեկտրամեխանիկական մեքենաներ, ներկառուցված էլեկտրաշարժիչով	2 հատ
8510	Էլեկտրասափրիչներ, մազակտրիչ սարքեր, մազահանման հարմարանքներ՝ ներկառուցված էլեկտրաշարժիչով	1 հատ՝ յուրաքանչյուրից
8511	Էլեկտրասարքավորումներ՝ ներքին այրման շարժիչների վառման կամ գործարկման համար՝ կայծից կամ վառելիքային խառնուրդի սեղմումից բոցավառումով (օրինակ՝ մագնիտո, վառքի կոճեր, վառքի մոմեր, շիկացման մոմեր, գործարկիչներ) գեներատորներ (օրինակ՝ հաստատուն և փոփոխական հոսանքի) և ընդհատիչներ՝ այդպիսի շարժիչների հետ օգտագործվող	2 հատ
8512	Էլեկտրալուսավորման և ազդանշանային սարքավորումներ, ապակու մաքրիչներ, հակասառցակալման և հակաքրտնամաշիչ սարքեր, օգտագործվող հեծանիվների կամ շարժիչային տրանսպորտային միջոցների վրա	2 հատ
8513	Դյուրակիր էլեկտրական լապտերներ՝ հոսանքի սեփական աղբյուրից աշխատող (օրինակ՝ չոր էլեմենտներ, կուտակիչներ, մագնիտո), բացի 8512 ապրանքային դիրքի լուսավորման սարքերից	2 հատ
8515110000	Զոդիչներ և զոդող ատրճանակներ՝ ցածր ջերմաստիճանում զոդման համար	1 հատ
851610	Էլեկտրական ջրատաքացուցիչներ՝ ոչ իներցիոն կամ կուտակիչ, ընկղմելի էլեկտրաեռացուցիչներ	1 հատ
8516 31 000 0	Էլեկտրաչորացուցիչներ՝ մազերի համար	2 հատ
8516 33 000 0	Էլեկտրաչորացուցիչներ՝ ձեռքերի համար	2 հատ
8516 40 000 0	Էլեկտրական արդուկներ	2 հատ

8516 50 000 0	Միկրոալիքային վառարաններ	2 հատ
8516710000	Այլ էլեկտրատաքացուցիչ սարքեր՝ սուրճի և թեյի պատրաստման համար	2 հատ
8516 72 000 0	Տոստերներ	2 հատ
8516 79 200 0	Ջեռոցներ (ֆրիտյուրնիցա)	2 հատ
8517	Էլեկտրական հեռախոսասարքեր կամ հեռագրասարքեր՝ լարային կապի համար, ներառյալ հեռախոսասարքերը՝ առանց լարային հեռախոսափողի և սարքեր՝ կրիչ հաճախականության լարային կապի համակարգերի համար կամ կապի թվային համակարգերի համար, տեսաֆոններ	2 հատ
8518	Խոսափողներ և դրանց տակդիրներ, բարձրախոսներ, գլխին հարմարեցվող ընկալուչներ և հեռախոսներ՝ զուգակցված կամ չզուգակցված խոսափողի հետ և կոմպլեկտներ՝ կազմված խոսափողից և մեկ կամ ավելի բարձրախոսներից, ձայնի հաճախականության ուժեղարարներ, էլեկտրական ձայնաուժեղարարային կոմպլեկտներ	4 հատ
8519	Սարքավորումներ՝ ձայնագրող կամ ձայնավերարտադրող	2 հատ
8521	Տեսագրող կամ տեսավերարտադրող սարքավորումներ տեսաընդունիչների հետ համակցված կամ չհամակցված	1 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից
8523	Սկավառակներ, ժապավեններ, տվյալների պահպանման էներգաանկախ պինդ մարմնից սարքեր, «ինտելեկտուալ քարտեր» և այլ կրիչներ՝ ձայնի կամ այլ երևույթների ձայնագրման համար, գրառված կամ չգրառված, ներառյալ մաստեր-դիսկերը և մատրիցաները՝ սկավառակների պատրաստման համար՝ բացի 37 խմբում ներառված ապրանքատեսակներից	12 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից
8517 12 000 0	Հեռախոսային ապարատներ՝ բջջային կապի ցանցի և ոչ լարային կապի այլ ցանցերի համար	2 հատ
8525 80	Տեսախցիկներ՝ կադր առ կադր պատկերման և տեսագրող խցիկներ, այլ թվային խցիկներ	2 հատ
8527	Ռադիոհեռախոսային, ռադիոհեռագրային կապի կամ ռադիոհաղորդման ընդունիչ սարքեր՝ մեկ պատյանում ձայնագրման կամ ձայնավերարտադրման սարքեր կամ ժամացույցի հետ համատեղված կամ չհամատեղված	2 հատ
8528	Հեռուստակապի ընդունիչ սարքեր, ռադիոընդունիչ կամ ձայնը կամ պատկերը գրանցող սարքերի համատեղմամբ, տեսամոնիթորներ կամ տեսապրոյեկտորներ	2 հատ
8536	Էլեկտրական ապարատուրա՝ կոմուտացիայի կամ էլեկտրական շղթաների պաշտպանության համար, կամ էլեկտրական շղթաներին կամ էլեկտրական	12 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 24 հատից ոչ ավելի

	շղթաներում միացումների համար (օրինակ՝ անջատիչներ, փոխանջատիչներ, ընդհատիչներ, ռելեներ, հալվող ապահովիչներ, տատանումների մարիչներ, խրոցակային եղանիկներ և վարդակներ, էլեկտրալամպերի համար կոթառներ, միացման տուփեր) 1000 Վ-ից ոչ ավելի լարման համար	
8539	Ծիկացման էլեկտրական գազապարպային լամպեր, ներառյալ՝ լույսի ուղղորդումով հերմետիկ լամպեր, ինչպես նաև ուլտրամանուշակագույն կամ ինֆրակարմիր լամպեր, աղեղնային լամպեր	12 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 24 հատից ոչ ավելի
8543	Էլեկտրական մեքենաներ և սարքեր, անհատական ֆունկցիաներ ունեցող, սույն խմբի այլ տեղում չհիշատակված կամ չնշված	1 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից
8543 70 500 1, 8543 70 500 9	Արևայրուքի սոլյարիում	0
8544	Հաղորդալարեր՝ մեկուսացված (ներառյալ արծնապատվածները կամ անոդավորվածները), մալուխներ (ներառյալ՝ համառանցքայինը) և այլ մեկուսացված էլեկտրական հաղորդիչներ՝ միացնող հարմարանքներով կամ առանց դրանց, մալուխներ՝ թելքաօպտիկական կազմված անհատական պատյաններով թելքերից՝ անկախ դրանցից հավաքված են, թե ոչ, էլեկտրահաղորդիչների կամ միացնող հարմարանքների հետ	10 կգ տարբեր տեսակներ, կամ 200 մ
86	Երկաթգծի լոկոմոտիվներ կամ տրամվայի շարժիչավոր վագոններ, շարժակազմ և դրանց մասեր, երկաթգծի կամ տրամվայների ուղեգծային սարքավորումներ և սարքեր և դրանց մասեր, բոլոր տեսակի մեխանիկական (ներառյալ՝ էլեկտրամեխանիկականը) ազդանշանային սարքավորումներ	0
87	Ցամաքային տրանսպորտային միջոցներ, բացի գնացքների և տրամվայների շարժակազմերից և դրանց մասեր ու պարագաներ՝	0
8703	Թեթև մարդատար ավտոմոբիլներ և շարժիչային այլ տրանսպորտային միջոցներ՝ բացառապես նախատեսված մարդկանց փոխադրելու համար (բացի 8702 ապրանքային դիրքում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցներից)՝ ներառյալ բեռնաուղևորատար ֆուրգոն-ավտոմոբիլները և մրցարշավային ավտոմոբիլները	1 հատ
8708	8701-8705 ապրանքային դիրքերում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր և պարագաներ	25 կգ
8711	Մոտոցիկլետներ (ներառյալ մոպեդներ) և հեծանիվներ՝ օժանդակ շարժիչներով, սայլակներով և առանց դրանց	1 հատ
8712 00	Երկանիվային հեծանիվներ և այլ հեծանիվներ (ներառյալ երեք անիվային հեծանիվներ՝ բեռ տեղափոխելու համար)՝ առանց շարժիչի	1 հատ

8713	Շարժվելու անընդունակ մարդկանց համար սայլակներ, սարքավորված կամ չսարքավորված շարժիչով կամ տեղափոխման համար այլ մեխանիկական սարքերով	1 հատ
8714	8711-8713 ապրանքային դիրքերում ընդգրկված տրանսպորտային միջոցների մասեր և պարագաներ	25 կգ
8715 00 100 0	Մանկական սայլակներ	1 հատ
88	Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր՝	0
8801 00 100	Աերոստատներ և դիրիժաբլներ, պլաներներ և դելտոպլաններ	1 հատ
8802 11 000	Ուղղաթիռներ՝ 2000 կգ չգերազանցող զանգվածով	1 հատ
8802 20 000	Ինքնաթիռներ և այլ թռչող սարքեր՝ 2000 կգ չգերազանցող զանգվածով	1 հատ
89	Նավեր, նավակներ և լողացող կառուցվածքներ	1 հատ
90	Գործիքներ և սարքեր՝ օպտիկական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, չափիչ, հսկիչ, ճշգրիտ, բժշկական կամ վիրաբուժական, դրանց մասեր և պարագաներ	1 հատ յուրաքանչյուր ենթադիրքից
9001 10	Օպտիկական մանրաթելեր, լարաններ և մանրաթելային օպտիկական մալուխներ	25 մ
9001 30 000 0	Կոնտակտային ոսպնյակներ	2 զույգ
9001 40	Ոսպնյակներ՝ ապակուց, ակնոցների համար	2 զույգ
9001 50	Ոսպնյակներ ակնոցների համար՝ այլ նյութերից	2 զույգ
9003	Շրջանակներ և արմատուրա՝ ակնոցների պաշտպանիչ, ակնոցների կամ համանման օպտիկական սարքերի համար, դրանց մասեր	4 հատ՝ յուրաքանչյուրից, բայց 8 հատից ոչ ավելի
9004	Ակնոցներ, պաշտպանիչ ակնոցներ և նմանատիպ օպտիկական սարքեր՝ կարգավորող, պաշտպանիչ և այլն	4 հատ՝ յուրաքանչյուրից, բայց 8 հատից ոչ ավելի
9005	Հեռադիտակներ, մոնոկուլյարներ և այլ փողեր՝ դիտարկման համար և դրանց արմատուրա, այլ աստղադիտական արմատուրա դրանց համար, բացի ռադիոաստղադիտական սարքերից	1 հատ՝ յուրաքանչյուրից
9006	Ֆոտոխցիկներ (բացի կինոխցիկներից), լուսաբռնկիչներ, բացի 8539 ապրանքային դիրքի գազապարպման լամպերից	1 հատ
9007	Կինոխցիկներ և կինոպրոյեկտորներ, ձայնագրման և ձայնավերարտադրման հարմարանքներ պարունակող կամ չպարունակող	1 հատ
9008	Պատկերի արտածման, բացի կինեմատոգրաֆիականներից, լուսանկարների մեծացման սարքեր և սարքավորումներ՝ պատկերի արտածման համար փոքրացմամբ (բացի կինեմատոգրաֆիականից)	1 հատ
9010	Սարքեր և սարքավորումներ՝ ֆոտոկինոլաբորատորիաների (ներառյալ սարքերի	0

	դիմակի պատկերը սենսիբիլիզացված կիսահաղորդիչ նյութերի վրա արտածող կամ վերարտադրող) տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չհիշատակված, նեգատասկոպներ, արտածման էկրաններ	
9011	Բարդ օպտիկական մանրադիտակներ՝ ներառյալ միկրոլուսանկարահանումների, միկրոկինոնկարահանումների և միկրոարտածման մանրադիտակներ	1 հատ
9012	Մանրադիտակներ, բացի օպտիկականից, դիֆրակցիոն ապարատներից	1 հատ
9014 10 000 0	Այլ կողմնացույցներ՝ ուղղությունը որոշելու համար	2 հատ
9016 00	Կշեռքներ՝ 0,05 գրամ կամ ավելի զգայունությամբ, կշռաքարերով կամ առանց դրանց	2 հատ
9017 20	Գործիքներ՝ գծագրման, գծանշման կամ մաթեմատիկական հաշվարկների համար, այլ	2 հատ
9017 20 100 0	Գծագրական հավաքածուներ	4 հատ
9017 20 900 0	Գործիքներ՝ մաթեմատիկական հաշվարկների համար (ներառյալ մաթեմատիկական քանոնները, սկավառակային կալկուլյատորները և համանմանները)	2 հատ՝ յուրաքանչյուրից
9017300000	Միկրոմետրեր, չափակարկիններ, տրամաչափիչներ	2 հատ՝ յուրաքանչյուրից
901780	Այլ գործիքներ	2 հատ
9018-ից 9019, 9022	Սարքեր և հարմարանքներ՝ կիրառվող բժշկության, վիրաբուժության, ատամնաբուժության կամ անասնաբուժության մեջ (ներառյալ սցինտիգրաֆիական ապարատները) էլեկտրաբժշկական այլ ապարատներ և սարքեր՝ տեսողությունը հետազոտելու համար	0
90-ից	Բժշկական դեղատոմսի հիման վրա օգտագործման համար անհրաժեշտ բժշկական տեխնիկա և սարքավորումներ	1 հատ կամ համապատասխան դեղատոմսում նշված քանակ, եթե այդպիսի քանակ նշված է
9018 31	ներարկիչներ՝ ասեղներով կամ առանց ասեղների	10 կգ
9018 32	մետաղյա խողովակաձև ասեղներ և ասեղներ՝ կարեր դնելու համար	10 կգ
9018 39	այլ	10 կգ
9018 90 100, 9018 90 200, 9018 90 300, 9018 90 400	գործիքներ և սարքավորումներ արյան ճնշումը չափելու համար, էնդոսկոպներ, հեմոդիալիզային սարքավորումներ (արհեստական երիկամներ, արհեստական երիկամների ապարատներ և դիալիզատորներ), դիաթերմիկ սարքավորումներ	2 հատ
9021	Օրթոպեդիկ հարմարանքներ՝ ներառյալ հենակները, վիրաբուժական գոտիները, կալանտները, բեկակալներ և այլ հարմարանքներ կոտրվածքները բուժելու համար, մարմնի	2 հատ՝ յուրաքանչյուրից

	արհեստական մասեր, լսողական ապարատներ և այլ հարմարանքներ, որոնք կրում են մարմնի վրա իրենց հետ կամ պատվաստվում են մարմնի մեջ՝ փոխհատուցելու համար օրգանի արատը կամ կորցրած աշխատունակությունը	
9023 00	Ցուցադրությունների համար նախատեսված սարքեր, սարքավորումներ և մոդելներ	0
9024	Մեքենաներ և սարքվածքներ նյութերի կարծրությունը, ամրությունը, սեղմվածությունը, առաձգականությունը կամ նյութերի այլ մեխանիկական հատկությունները փորձարկելու համար	0
9027	Սարքեր և ապարատուրա՝ ֆիզիկական կամ քիմիական անալիզի համար (օրինակ՝ բևեռաչափեր, բեկումաչափեր, սպեկտրաչափեր, գազա- կամ ծխաանալիզատորներ). սարքեր և ապարատուրա՝ մածուցիկության, ծակոտկենության, ընդարձակման, մակերեսային ձգունության չափման կամ հսկման համար կամ նույնանման սարքեր ու ապարատուրա. սարքեր և ապարատուրա՝ ջերմության, ձայնի կամ լույսի չափման կամ հսկման համար (ներառյալ էքսպոնոմետրերը). միկրոտոմներ	0
9030	Օսցիլոսկոպներ, սպեկտրաանալիզատորներ, այլ սարքեր և ապարատուրա՝ էլեկտրական մեծությունների չափման կամ հսկման համար՝ բացի 9028 ապրանքային դիրքում նշված չափիչ սարքերից. սարքեր և ապարատուրա՝ ալֆա, բետա, գամմա, ռենտգենյան, տիեզերական կամ այլ իոնացնող ճառագայթումները հայտնաբերելու կամ չափելու համար	0
9031	Չափիչ կամ հսկիչ սարքեր, սարքվածքներ և մեքենաներ՝ տվյալ խմբում այլ տեղում չնշված կամ չներառված. պրոֆիլային պրոյեկտորներ	0
9033 00 000 0	Մասեր և պարագաներ (տվյալ խմբի այլ տեղում չնշված կամ չներառված)՝ մեքենաների, սարքերի, գործիքների կամ 90 խմբի ապարատների համար	10կգ
91	Ժամացույցներ և դրանց մասեր	6 հատ
9114	Բոլոր տեսակի ժամացույցների մասեր	1 կգ
92	Երաժշտական գործիքներ և դրանց մասեր և պարագաներ	2 հատ
9209	Երաժշտական գործիքների մասեր (օրինակ՝ երաժշտական արկղիկների մեխանիզմներ) և պարագաներ (օրինակ՝ քարտեր, սկավառակներ և գլանիկներ մեխանիկական գործիքների համար). մետրոնոմներ, կամերտոններ, փողեր ամեն տեսակի՝ ձայնի սևեռված բարձրությամբ	10 կգ
9401	Կահույք՝ նստելու համար (բացի 9402 ապրանքային դիրքում նշվածներից), որոնք ձևափոխվում են կամ չեն ձևափոխվում որպես մահճակալ, դրանց մասեր	6 հատ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 12 հատից ոչ ավելի
9402	Կահույք՝ բժշկական, վիրաբուժական,	0

	ատամնաբուժական կամ անասնաբուժական, վարսահարդարման բազկաթոռներ և նմանատիպ աթոռներ, դրանց մասեր	
9403	Այլ կահույք և դրանց մասեր	6 հատ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 12 հատից ոչ ավելի
9404	Ներքնակային հիմքեր, անկողնային պարագաներ և կահավորման նմանատիպ ապրանքներ (օրինակ՝ ներքնակներ, վերմակներ, մգդակված վերմակներ՝ փետուրից, բազմոցային բարձեր, փափուկ աթոռներ և բարձեր) զսպանակներով կամ լցված ցանկացած նյութով կամ կազմված ծակոտկեն ռետինից կամ պլաստմասսայից, պատված կամ չպատված	6 հատ՝ յուրաքանչյուրից, բայց 12 հատից ոչ ավելի
9405	Լամպեր և լուսավորման սարքավորումներ, ներառյալ լուսարձակները, լամպեր, լույսի նեղ ուղղվածությամբ լամպերի, ցոլալամպերի և դրանց մասերի, այլ տեղում չնշված և չներառված, լուսային ցուցանակներ, լուսային տախտակներ անունով և անվանումով կամ հասցեով և նմանատիպ արտադրատեսակներ, ներկառուցված լույսի աղբյուրով և դրանց մասեր, այլ տեղում չհիշատակված կամ չներառված	3 հատ՝ յուրաքանչյուրից
9406 00	Հավաքովի շինարարական կառուցվածքներ	1 լրակազմ
95	Խաղալիքներ, խաղեր և մարզագույք, դրանց մասեր և պարագաներ	6 հատ
9503 00	Եռանիվ հեծանիվներ և անիվներով այլ խաղալիքներ, սայլակներ՝ տիկնիկների համար, տիկնիկներ, այլ խաղալիքներ, փոքրացված չափերով մոդելներ և համանման մոդելներ՝ զվարճությունների համար, շարժվող կամ չշարժվող, գլուխկոտրուկներ՝ ամեն տեսակի	6 հատ՝ յուրաքանչյուրից, բայց 12 հատից ոչ ավելի
9504 30	Մանրադրամով, թղթադրամով, բանկային քարտերով կամ վճարման այլ միջոցներով գործողության մեջ դրվող խաղեր	0
9504 20 000	Բիլիարդի առարկաներ և պարագաներ	15 հատ՝ յուրաքանչյուրից
9504 20 000 1	Բիլիարդի սեղան (ոտքերով կամ առանց ոտքերի)	1 հատ
9504 40 000 0	Խաղաքարտեր	12 հատ
9505	Տոնահանդիսության համար ապրանքներ, կառնավալային պարագաներ, ներառյալ անպարարությունները և կատակները ցուցադրելու համար	6 հատ
9506	Մարզագույք և սարքավորումներ՝ ընդհանուր ֆիզկուլտուրայով, մարմնամարզությամբ, թեթև ատլետիկայով, սպորտի այլ ձևերով (ներառյալ՝ սեղանի թենիսը) զբաղվելու համար կամ բացօթյա խաղերի համար, տվյալ խմբի այլ տեղերում չնշված և չհիշատակված, լողավազաններ և ավազաններ երեխաների համար	4 հատ յուրաքանչյուրից

9506 11 100 0	դահուկներ վազքային	4 զույգ
9506 11 290 0	այլ	4 զույգ
9506 11 80	այլ դահուկներ	4 զույգ
9506 70 100 0	չմուշկներ սառույցի վրա սահելու համար	4 զույգ
9506 70 300 0	անվաչմուշկներ	4 զույգ
9507	Ձկնորսական կարթեր, կեռիկներ և այլ առարկաներ՝ ձկնորսության համար, ցանցեր՝ ձկնորսական, թիթեռների համար և համանման ցանցեր, մուլյաժային թռչնի տեսքով խայծեր (բացի 9208 կամ 9705 ապրանքային դիրքերում նշվածից) և համանման ապրանքներ՝ որսորդության և հրաձգության համար	3 հատ՝ յուրաքանչյուրից
96	Տարբեր պատրաստի իրեր	6 հատ՝ յուրաքանչյուր ենթադիրքից, բայց 12 հատից ոչ ավելի
9619	Կանացի հիգիենիկ միջադիրներ և խծուծներ (տամպոններ), մանկական խանձարուրներ և տակդիրներ ու նույնանման արտադրատեսակներ՝ ցանկացած նյութից	25 կգ

* Ծանոթագրություն

Սույն հավելվածով սահմանված՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի նույն խմբում ներառված ապրանքների համար տարբեր արժեքային, քաշային և (կամ) քանակական չափաքանակներ սահմանված լինելու դեպքում գործում են առավելագույն բացվածքով արտաքին տնտեսական գործունեության ծածկագրին դասվող ապրանքների համար սահմանված կարգավորումները՝ բացառապես այդ բացված ծածկագրին համապատասխանող տողում ներառված ապրանքների համար:

Հավելված N 2
ՀՀ կառավարության
2020 թվականի փետրվարի 13-ի
N 171-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՅՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱԿՆՀԱՅՏ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ» 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ԵՆ ՄԻԱԳՈՒՄԱՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐԻ ՁԵՎՈՎ ԳԱՆՁՎՈՂ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԸ ԵՎ ՀԱՐԿԵՐԸ

Ապրանքի ծածկագիրն ըստ ԱՏԳ ԱԱ-ի	**Ապրանքի համառոտ բնութագիրը**	**Սույն չափը գերազանցող մասը համարվում է ապրանքների ակնհայտ առևտրային քանակություն**
1	2	3
87	Ցամաքային տրանսպորտային միջոցներ, բացի գնացքների և տրամվայների	0

	շարժակազմերից և դրանց մասեր ու պարագաներ՝ բացառությամբ.	
8708	8701-8705 ապրանքային դիրքերում ընդգրկված շարժիչային տրանսպորտային միջոցների մասեր և պարագաներ	25 կգ
8711	Մոտոցիկլետներ (ներառյալ մոպեդներ) և հեծանիվներ՝ օժանդակ շարժիչներով, սայլակներով և առանց դրանց	1 հատ
8712 00	Երկանիվային հեծանիվներ և այլ հեծանիվներ (ներառյալ երեք անիվային հեծանիվներ՝ բեռ տեղափոխելու համար)՝ առանց շարժիչի	1 հատ
8713	Շարժվելու անընդունակ մարդկանց համար սայլակներ, սարքավորված կամ չսարքավորված շարժիչով կամ տեղափոխման համար այլ մեխանիկական սարքերով	1 հատ
8714	8711-8713 ապրանքային դիրքերում ընդգրկված տրանսպորտային միջոցների մասեր և պարագաներ	25 կգ
8715 00 100 0	Մանկական սայլակներ	1 հատ
88	Թռչող ապարատներ, տիեզերական ապարատներ և դրանց մասեր՝ բացառությամբ.	0
8801 00 100	Աերոստատներ և դիրիժաբլներ, պլաներներ և դելտոպլաններ	1 հատ
8802 11 000	Ուղղաթիռներ՝ 2000 կգ չգերազանցող զանգվածով	1 հատ
8802 20 000	Ինքնաթիռներ և այլ թռչող սարքեր՝ 2000 կգ չգերազանցող զանգվածով	1 հատ
89	Նավեր, նավակներ և լողացող կառուցվածքներ	1 հատ

Հավելված N 3
ՀՀ կառավարության
2020 թվականի փետրվարի 13-ի
N 171-Ն որոշման

Օրինակելի ձև

ԾԱՆՈՒՅՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՆՈՒՂՂԱԿԻ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 44-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջներով՝ տեղեկացվում է, որ Ձեր կողմից _____-ին

(օրը, ամիսը, տարեթիվը)

Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծված ապրանքների քանակները գերազանցում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի փետրվարի 13-ի N 171-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված N 1 հավելվածով տվյալ ապրանքատեսակների համար սահմանված չափաքանակները՝ ստորև բերված աղյուսակում նշված համապատասխան չափերով: Վերոնշյալի կապակցությամբ Դուք պարտավոր եք Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 6-րդ մասին և 83-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ հարկային մարմին ներկայացնել օրենսդրությամբ սահմանված կարգով լրացված ներմուծման հարկային հայտարարագիր:

• Ստացա ծանուցման օրինակը

_____

(ծանուցվող ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը, ստորագրությունը, անձնագրի կամ նույնականացման քարտի տվյալները, հեռախոսահամարը և հանրային ծառայությունների համարանիշը՝ առկայության դեպքում)

• Պարտավորվում եմ սույն ծանուցումը տրամադրել ապրանքի սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձին

_____

(բեռնափոխադրող կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ անունը, ՀՎՀՀ-ն)

_____

(բեռնափոխադրողի ներկայացուցչի անունը, ազգանունը, պաշտոնը (կամ լիազոր անձը), ստորագրությունը)

_____

(օրը, ամիսը, տարեթիվը)

_____

(մաքսային մարմնի պաշտոնատար անձի պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

Աղյուսակ

NN ը/կ	**Ներմուծված ապրանքների ծածկագիրը**	**Համառոտ բնութագիրը**	**Չափման միավորը**	**Քանակը**	**Սահմանված չափաքանակը**	**Գերազանցող մասը**
1.						
2.						
3.						